«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 51551 «31» 03 2021թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ ԱՕ 5-րդ, 158-162-րդ հոդվածների և ՀՀ կառավարության 11.08.2005 թիվ 1599-Ն ու 1384-Ն որոշումների պահանջները՝

Հրամայում եմ.

1.Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի աշխատողների 2021 թվականի ամենամյա արձակուրդի տրամադրման հետևյալ ժամանակացույցը.

ա) ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական աշխատողներին տրամադրել 35 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա երկարացված արձակուրդ՝ 2021թ. հուլիսի 8-ից մինչև օգոստոսի 25-ն (ներառյալ) ընկած ժամանակահատվածում,

բ) ԵՊՀ ԻՄ տնօրենին և ԵՊՀ ԻՄ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին ներառյալ՝ բաժնի վարիչներին) տրամադրել 25 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա երկարացված արձակուրդ՝ 2021թ. հուլիսի 22-ից մինչև օգոստոսի 25-ն (ներառյալ) ընկած ժամանակահատվածում,

գ) ԵՊՀ ԻՄ գրադարանի աշխատողներին տրամադրել 20 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա նվազագույն արձակուրդ և 5 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա լրացուցիչ արձակուրդ՝ 2021թ. հուլիսի 22-ից մինչև օգոստոսի 25-ն (ներառյալ) ընկած ժամանակահատվածում,

դ) ԵՊՀ ԻՄ այլ կատեգորիայի աշխատողներին տրամադրել 20 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 2021թ. հուլիսի 29-ից մինչև օգոստոսի 25-ն (ներառյալ) ընկած ժամանակահատվածում:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետում սահմանված ժամանակացույցից տարբերվող այլ ժամկետներում աշխատողներին ամենամյա արձակուրդ (կամ դրա մի մասը) կարող է տրամադրվել միայն ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով:

3. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ ԻՄ աշխատողներին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ